

# COVID-19

## Պատնեշների Կիրառումը՝ Որպես Ինժեներական Վերահսկում

**Վերջին Թարմացումները.** 7/16/21 Ֆիզիկական պատնեշների կիրառումն այլևս պարտադիր չէ:

Հունիսի 15-ին Լոս Անջելեսի Շրջանում վերացվեցին COVID-19-ին առնչվող շատ սահմանափակումներ, այդ թվում՝ բիզնես-ձեռնարկությունների կամ գործատուների կողմից COVID-19-ի տարածումը կանխելու համար ֆիզիկական պատնեշների կիրառման պահանջը: Սույն ուղեցույցը վերաբերում է այն բիզնեսներին և գործատուներին, որոնք ցանկանում են շարունակել ֆիզիկական պատնեշների կիրառումը՝ որպես ինժեներական հսկողություն՝ ի հավելումն COVID-19-ի կանխարգելման լրացուցիչ միջոցառումներին:

- 1. Պատնեշների նպատակը՝ որպես վերահսկողության միջոց:** Ֆիզիկական տարածական հեռավորության պահպանման նպատակը հիվանդության փոխանցումը կանխելն է: Անթափանց պատնեշների կիրառումը կարող է հանդիսանալ վերահսկման ինժեներական լուծում, որը տրամադրում է լրացուցիչ պաշտպանություն և՛ հաճախորդներին, և՛ աշխատակիցներին: Այս բաժանարարների նպատակն է ապահովել, որ մի օգտատիրոջ շնչառական գոտին չաղտոտվի մյուսի արտաշնչումներից:
- 2. Պատնեշների ֆիզիկական հատկությունները:** Պատնեշները պետք է պատրաստված լինեն անջրաթափանց և ամուր նյութերից, որոնք կարելի է հաճախակի մաքրել, և ունենան համապատասխան բարձրություն և լայնություն՝ կաթիլները պահելու համար (օրինակ՝ օրգանական ապակուց (prexiglass)): Պատնեշները պետք է տեղադրվեն **Հրդեհային և Շինարարական** օրենքների պահանջներին համապատասխան, որպեսզի չխանգարեն օդափոխության կամ հրդեհային պաշտպանության համակարգերին:
- 3. Պատնեշի բարձրությունը և լայնությունը:** Պատնեշի բարձրությունը պետք է հաշվի առնի ամենաբարձրահասակ օգտատիրոջը, իսկ լայնությունը պետք է լինի այնքան, որքան թույլ է տալիս մակերեսը: Ընդհանրապես, պատնեշի բարձրությունը պետք է տրամադրի 6 ոտնաչափ պաշտպանություն՝ սկսած հատակից: Եթե սահմանափակ փոխանակումների համար բացել են անհրաժեշտ (օր.՝ փաստաթղթի բնիկ, կամ տարածք վաճառքի կետի տերմինալի համար), այդ անցքերը պետք է հնարավորինս փոքր լինեն և պետք է տեղադրված լինեն կենտրոնից դուրս, այլ ոչ թե մարդկանց դեմքի դիմաց:
- 4. Մաքրում և ախտահանում:** Օրվա ընթացքում առնվազն մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության մաքրեք և ախտահանեք պատնեշները՝ օգտագործելով Շրջակա Միջավայրի Պահպանության Գործակալության (EPA) ցանկում COVID-19-ի համար հաստատված նյութեր, և հետևեք տվյալ ապրանքի օգտագործման ցուցումներին. <https://www.epa.gov/pesticide-registration/listn-disinfectants-use-against-sars-cov-2>:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Արդյունաբերական Ներգրավվածություն (Industry Engagement)՝ (626) 430-5320 հեռախոսահամարով:

COVID-19-ի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար այցելեք <http://publichealth.lacounty.gov> կամ զանգահարեք Լոս Անջելեսի Շրջանի տեղեկատվական գիծ՝ 2-1-1 համարով, որն աշխատում է օրը 24 ժամ:

